

Ա Ի Ե Տ Ա Բ Ե Ր

« Ա. Ն. ԵՍ ԶԵՉԻ ՄԵԾ ՈՒՐԱԵՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԻՍ ԿՈՒՏԱՄ : ԴՈՒԿ. Բ. 10

Հ Ա Տ Ո Ր 30 .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ԴԵԿՏԵՄԲԵՐ 7 . 1875 .

ԹԻԻ 49

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Քրիստոս ինչ կը պահանջէ : — Հաւատք ընծայել : — Միաբանական աղօթք ի նազարէ : — Արեան շրջանը : — Նիկոէի մէկ արձանագրութիւնը : — Տէր Սահակ և Հայոց կանոնագիրքը : — Հռոմէականաց մէկ վկայութիւնը : — Օրինակ ըլլալու արժանի եկեղեցի մը : — Ծանուցում : — Վնասակար գոյրջիք անհետ ընելու միջոց մը : — Կեսարիա : — Լոնտոնի ստորերկրեայ երկաթուղին : — Հին գիրքեր : — Մարտաւնու աստուածաբանական ճեմարանին բնութիւնը : — Քաղաքական լուրեր :

ՔՐԻՍՏՈՍ Ի՞ՆՉ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ

1. Ա. ՊԱՇԽԱՐԵԼ : « Թէ որ չսպաշխարէք, ամէնքդ ալ անանկ պիտի կորսուիք » (Ղուկ. ԺԳ. 3) :
2. Քրիստոսի հաւատալ : « Ան որ Որդիին կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի. և ան որ Որդիին չհնազանդիր, անկա կեանք պիտի չտեսնէ. հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ » (Յովհ. Գ. 36) :
3. Աղօթք ընել : « Անոնց առակ մըն ալ ըսաւ աս բանիս վրայով, թէ պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձրանալ » (Ղուկ. ԺԸ. 1) :
4. ԶՔրիստոս դաւանել : « Ով որ մարդոց առջև զիս կը դաւանի, ես ալ անկա պիտի դաւանիմ իմ Հօրս առջև որ երկինքն է : Եւ ով որ մարդոց առջև զիս կ'ուրանայ, ես ալ անկա պիտի ուրանամ իմ Հօրս առջև որ երկինքն է » (Մատթ. Ժ. 32, 33) :
5. Տէրունական ընթրեաց հաղորդուիլ : « Եւ հաց առաւ, գոհացաւ, կտրեց և տուաւ անոնց ու ըսաւ. Աս է իմ մարմինս որ ձեզի համար տրուած է, ասիկա ըրէք զիս յիշելու համար » (Ղուկ. ԻԲ. 19) : « Եւ դաւաթը առաւ, գոհացաւ ու տուաւ անոնց և ըսաւ. Ամէնքդ ալ խմեցէք սակէ » (Մատթ. ԻԶ. 27) :
6. Մկրտուիլ : « Գացէք, բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք զա-

նոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ » (Մատթ. ԻԸ. 19) :

7. Իր ընկերը սիրել : « Աս է իմ պատուէրս որ մէկզմէկ սիրէք, ինտոր որ ես ձեզ սիրեցի » (Յովհ. ԺԵ. 12) :

ՀԱՒԱՏՔ ԸՆԾԱՅԵԼ

Հաւատք ընծայելն է ուրիշի մը ուղղութեանը վստահիլ : Աշխարհիս վրայ ամէն դործի հիմն է այս վստահութիւնը : Ասոր պակասութիւնն է պատճառ որ գործերն անյաջող կ'երթան, և նոր ձեռնարկութեանց համար ստակ չի գտնուիր : Թուրքիոյ շատ քաղաքներուն մէջ ստակը դիզուած է, բայց ինչ օգուտ : Ի՞նչու համար առևտրական յուսալից գործողութեանց համար պատրաստ ստակ չկայ : Վասն զի վստահութիւն չկայ, և այս է բոլոր պատճառը : Թէ այս երկրին և թէ ուրիշ երկիրներու համար ամենէն հարկաւոր բանն է կարենալ հաւատք ընծայել մարդոց . բայց որպէս զի մարդոց հաւատք ըլլայ, պէտք է նախ որ առ Աստուծոյ ճշմարիտ հաւատք ըլլայ : Դժուարին է մէկու մը իր ընկերին վստահիլ, եթէ վստահութիւն չունի առ Աստուծոյ : Բայց եթէ թէ՛ առ Աստուծոյ և թէ՛ առ մարդիկ հաւատք ունինք, կրնանք ամէն բան ընել :

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ Ի ԽԱՍՊԻՒՂ

Դեկ. 12, կիրակի օր կէս օրէն ետքը ժամ 1, « Հիմ ժամանակ է զից շունչ արկնալու » . Հոովմ. ԺԳ. 11 :

Մեր Տէրը հաւատացելոց վրայ անհրաժեշտ պարաք կը դնէ միշտ արթուն կենալ, և որովհետև մարդս բնութեամբ երթակայ է թմրելու և

քնանալու, ուստի հարկաւոր է ժամանակ ժամանակ սթափիլ և արթննալ :

Յուրաքն սառելու մօտ եղող մարդը, եթէ թողուի անշարժ, կամաց կամաց պաղելով կեանքը կը կորսնցունէ : Հոգւոր ցրտութիւնն ալ այսպէս է : Ուստի աստուածային պատգամը կ'ըսէ. « Հիմա ժամանակ է մեզի քունէն արթննալու » : Հիմա ժամանակ է մեզի հոգւոր շարժում ընելու, ի գործ դնելով ամէն դրաւոր միջոցներ, որոց մին է աղօթքը :

Սիրելի եղբայրներ և քոյրեր, որպէս զի մեր աղօթքն ընդունելի ըլլայ, խորին զգացմամբ մեր և մեր ընկերաց կարօտութեանցը վրայ խորհելով և աղօթքի հոգին խնդրելով, ներկայանանք սրբարանը :

Դարձեալ երբ մեր թմրած ընկերները կը տեսնենք անհոգութեան մէջ, ողորմինք անոնց, ջանանք զանոնք արթնցնել և շարժում տալ անոնց :

Ով այնչափ անգութ է, որ իր ընկերը ճամբուն վրայ ցուրտէն կիսամեռ ինկած գտնէ, և ջանայ զանի կենդանացնել հարկաւոր դարմաններով : Որչափ աւելի մեծ պիտի ըլլայ ուրեմն այն մարդուն անգութիւնը, որ իր եղբայրը հօգւորապէս ցրտացեալ, և յաւիտենական կեանքը կորսնցունելու վտանգին մէջ տեսնէ, և ձեռք չերկնցնէ անոր օգնելու և զանի ի կեանս բերելու :

Եկէք ուրեմն, Քրիստոսեայ սիրելիք մեր, եկէք, միաբան խնդրենք վերէն այն Հոգին որ կը յանդիմանէ աշխարհը մեզոց համար, որպէս զի անով առաջնորդուելով, մեր և մեր մեղսակից ընկերաց անմահ հոգւոց վերկութեանը հոգ տանինք, և ընենք շուտով ինչ որ այս նպատակաւ ընել արժան է :

Մ. Տ. ՔԻՐԻՍՏՈՍԵԱՆ

ԱՐԵՍԱՆ ՇՐՋԱՆԸ

Արեան բոլոր մարմնոյն մէջ շարունակ շրջան ընելը ճանչցաւ, ժի. դարուն առաջին կիսուն մէջ, Հարուէ անուն Անգղիացին: Անիէ առաջ շատ քիչ բան գիտցուած էր սրտին պաշտօնին եւ արեան շրջանին վրայ: Կը կարծուէր թէ շնչերակներն օդով լեցուն ամաններ էին շնչափողոյն պէս: Երակներուն համար ալ կը կարծուէր թէ արիւնը սառնելու համար միայն կը ծառայէին: Այն դարուն մէջ մարդիկ չէին ուզեր իրենց դաղափայրները փոխել, եւ փափաք չունէին ճշմարիտը գտնելու համար հետազոտութիւններ եւ փորձեր ընել:

Հարուէ ծնաւ 1578ին, աղէկ կրթուեցաւ, եւ ուզելով բժշկութիւն սորվիլ, գնաց Իտալիոյ Բատուա քաղաքը, ուր այն ատեն հմուտ բժիշկներ անդամազննութեան եւ վիրաբուժութեան վրայ դասեր կու տային: Հարուէ 23 տարուան էր երբ Անգղիա դարձաւ, եւ սկսաւ Լոնտոնի մէջ բժշկութիւն ընել: Շուտով մեծ համբաւ վաստկեցաւ, եւ հրաւիրուեցաւ անդամազննութեան եւ վիրաբուժութեան վրայ դաս տալ արքունի բժշկական դպրոցին ուսանողաց: 1619ին էր որ Հարուէ, իր դասատուութեան ատենը մարդկային մարմնոյն վրայ գննութիւններ ընելով հասուեցաւ արեան կանոնաւոր եւ շարունակ շրջանին, եւ այս գիւտն ընելէն իբր 9 տարի ետքը, այսինքն 1628ին, իր առաջին գիրքը հրատարակեց արեան շրջանին վրայ: Հարուէ անատեն թագաւորին բժիշկն էր, եւ մեծ համբաւ ունէր, բայց յիշեալ նոր գիրքը չաւելցուց անոր համբաւը, այլ մանաւանդ ժամանակ մը խոչեղաւ բժշկական ասպարէզին մէջ անոր յառաջադիմութեանը: Երեւելի բժիշկներ կը հակառակէին անոր կարծեացը, հասարակ ժողովուրդն ալ կ'արհամարհէր զՀարուէ իբրեւ բախուկ: Սակայն Անգղիոյ թագաւորը Կարոլոս որ հետաքրքիր էր սորվելու գիտութեանց գաղտնիքը՝ քաջաւերեց զՀարուէ, եւ շատ անգամ ներկայ գտնուեցաւ առանձին փորձերուն զորս Հարուէ կ'ընէր իր կարծեաց ուղղութիւնն ստուգելու համար: Երբ Կարոլոս քաղաքական յեղափոխութեան պատճառաւ ինկաւ իր աթոռէն, Հարուէ անոր հետ գնաց: Անոր բացակայութեան ատենը թշնամիները կողոպտեցին անոր տունը, եւ այրեցին անոր գրատունը եւ գիտնական հետազոտութեանց վերաբերեալ շատ պատանի թուղթերը: Բայց ժամանակը մեծ փոփոխութիւն բերաւ հասարակութեան մտքին մէջ: Հարուէ գեռ կենդանի էր, երբ արեան շրջանին վրայ անոր գիւտն իբրեւ ուղիղ ընդհանուր

ճանչցուեցաւ, եւ այն դարուն ամենէն երեւելի մարդիկ մեծ յարգեալ պատիւ կ'ընծայէին Հարուէի, որ առհասարակ կը համարուէր իր դարուն ամենէն նշանաւոր բժիշկը եւ անդամազննիչը: Հարուէ մինչեւ 80 տարի ապրեցաւ, եւ մահուանէն առաջ անոր արձանը դրուեցաւ բժշկական արքունի ձեւմարանին մէջ ի պատիւ անոր այս գիւտին: Հարուէ խոնարհամիտ եւ մարդասէր էր, եւ անոր քննութիւններն աւելցուցին անոր մեծարանքն առ Աստուած, որոյ ձեռքը շինած է եւ կը պահէ մարմնոյ սքանչելի յօրինուածը:

ՆԻՆՈՒԷԻ ՄԷԿ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Վերջին տարիներս Նինուէի սեպագիր արձանագրութիւնք մեծ ըյս տուին պատմութեան, մանաւանդ Ծննդոց գիրքին պատմութեանը: Նոր գտնուած արձանագրութիւն մը, որ Ծննդոց գիրքէն աւելի ընդարձակ կը խօսի աշխարհիս արարչագործութեանը եւ նախկին պատմութեան վրայ, գտնուած արձանագրութեանց պատուականագոյնն է, եւ բարեբախտաբար անփնտաս կերպով Անգղիա փոխադրուելով Բրիտանական թանգարանը դրուած է: Արձանագրութիւնը պիտի թարգմանուի, եւ այժմ անոր վրայ հետեւեալ համառօտ տեղեկութիւնը տրուած է:

Արձանագրութիւնը կը խօսի թէ ինչպէս արարչութեանէն առաջ ամէն բան անձեւ եւ անպատրաստ էր, եւ կ'ըսէ թէ այն ատեն Թեալա եւ Դեաա անուն աստուածութիւն մը կը հրամայէր: Յետոյ կ'ըսէ թէ երկինքէն զօրութիւն մը որ հպարտութեամբ երկնից աստուծոյն դէմ ելած էր՝ դահավիժեցաւ անդունդը: Այս անկումը ցուցնելու համար արձանագրութեան մէջ նկարուած է կտուք մը որմէ փայլատակուք կ'արձակուին եւ շանթեր կը տեղան: Յետոյ, կ'ըսէ, աստուածները ստեղծեցին տիեզերք այլեւ այլ ժամանակներ, եւ ամէն անգամ արարածներն աչքէ անցնելով, կ'ըսէին թէ բարի են: Արարչագործութեան վախճան տրուեցաւ մարդուն ստեղծմամբ որ ի սկզբան մաքուր, անմեղ եւ ազնիւ յատկութիւններով զարդարեալ էր: Աստուածութիւնն այս նոր էակին երկայն վարդապետութիւն ընելով վարժեց զանի իր արտօնութիւններուն մէջ, եւ իր վիճակին գերազանցութիւնը ցուցուց անոր: Բայց այն օրհնեալ վիճակը երկայն չտեւեց: Քիչ ետքը մարդը փորձուելով ինկաւ, եւ անատեն աստուածութիւնն անոր դէմ սոսկալի անէծք կարդաց, եւ անոր գիտուն տեղաց այն ամէն վիշտերը որ այնուհետեւ չվերցան մարդկութեան վրայէն:

Ս. ԿՐՏՊ. Յ. ԹՈՒՄՍԱՆՍ

Լօզան

ՏԵՐ ՍԱՀԱԿ ԵՒ ՀՍՅՈՑ ԿԱՆՈՆԱԳԻՐԻԸ

Տեր Սահակ գիտնական քահանան իր Գննական կրօնագիտութեան մէջ կանոնական եւ անկանոն գրոց վրայ խօսելով կ'ըսէ թէ, Գրիստոնեայք այնպէս ընդունեցան եւ դործածեցին այս գիրքերն ինչպէս Հրեայք: Հայոց եկեղեցին ալ, կ'ըսէ, մինչեւ հինգերորդ դար, արեւելեան եւ արեւմտեան եկեղեցեաց հետեւելով, այնպէս ընդունեց, բայց ի Պարտաւ գումարեալ ժողովը յատկապէս որոշեց այս գիրքերը:

Չենք գիտեր թէ ինչ ըսել կ'ուզէ հեղինակը, ըսելով թէ ի Պարտաւ գումարեալ ժողովը յատկապէս որոշեց այս գիրքերը: Եթէ ըսել կ'ուզէ թէ այս գիրքերը որոշուած չէին, այսինքն, ասոնց, կանոնականներուն եւ անկանոններուն, մէջտեղ տարբերութիւն մը դրուած չէր, եւ Պարտաւ ժողովը դրաւ այս տարբերութիւնը, ինք իրեն հակառակ կը խօսի, քանզի քիչ մը առաջ ըսաւ թէ Պարտաւ ժողովն առաջ ալ Հայոց եկեղեցին այնպէս կ'ընդունէր այս գիրքերն, ինչպէս կ'ընդունէին արեւելեան եւ արեւմտեան եկեղեցիք: Պատմութեան քիչ մը տեղեկալ եղողները գիտեն թէ, ըստ վկայութեան ամենէն նախնի հարց եւ եկեղեցական մատենագրաց, Գրիստոնեայք, եկեղեցեաց առաջին դարերէն սկսեալ, կանոնական գիրքերն անկանոններէն կ'որոշէին, եւ առջինները միայն ներշնչեալ կը համարէին, եւ թէ նախնի եկեղեցական հարց եւ մատենագրաց ամանք, ինչպէս նաեւ մեր Խորենացին, կանոնական գիրքերը «յայտնիք» բառով, շատ անգամ նաեւ մի ըստ միով յանուանէն, կը յիշեն ի դրուելութիւն հաւատացելոց: Ուստի, եթէ Պարտաւ ժողովն առաջ արդէն որոշուած էին կանոնականք անկանոններէն, յիշեալ ժողովն ինչ ըրաւ: Պարտաւ ժողովը ոչ թէ որոշեց այն երկու կարգ, ներշնչեալ եւ ոչ ներշնչեալ, գիրքերն իրարմէ, այլ անկանոններուն եկեղեցեաց մէջ կանոնաւորութեան հաւասար կարգացուելն արգելեց: Ահա ժողովին իրերորդ կանոնը:

«Եւ եղիցի ձեզ ամենեցուն, եկեղեցականաց եւ աշխարհականաց, պաշտել ՚ի գիրս սուրբս ՚ի Հին եւ ՚ի Նոր կտակարանաց (որ են) . Մովսիսի գիրք, Ծննդոցն, Ելիցն, Ղեւտականն, Թիւք, Երկրորդ օրէնք, Յեսու Նաւեսայ, Դատաւորացն եւ Հռութայն, Թագաւորացն Դ. , Մնացորդացն, Երկրորդ Եղիբ բանք, Դիրք Յովբայ, Սաղմոսացն գիրք մի, Սողոմոնի երեք գիրք, Մարգարէք: Եւ արտաքուստ պատգամաւորեսցի առ ուսուցանել զձեր մանկունս Սիրաքայ խմատութիւնն, Մակարայեցիք երեք, եւն: »

Կանոնադրոց քանի մը օրինակներն աչքէ անցուցած եմ, օրինակ մ'ալ ձեռքս ունիմ, ամէնքն ալ այսպէս ունին : Չամէնեան հայր Միքայէլ վարդապետ եւ Տէր Սահակ միայն տարբեր կ'աւանդեն . ասոնք Տովբիթ, Յուզիթ, Մակաբայեցիք եւ Սիրաք կանոնական գրոց կարգը կը դասեն : Կ'երեւայ թէ Տէր Սահակ կանոնադիրքերուն բնաւ նայած չէ, այլ Չամէնեանէն կ'օրինակէ :

Հիմա կը մնայ հարցունել թէ մեր ազգը որո՞ւ պիտի նայի, կանոնադիրքին թէ Չամէնեանի եւ Տէր Սահակայ, գիտնալու համար թէ Հայոց եկեղեցին ի սկզբանէ ի վեր ինչպէս ճանչցաւ եւ գործածեց այս գիրքերը :

Եթէ Մխիթարեանց դրատանը մէջ գտնուած կանոնադիրքերը Չամէնեանին պէս ունին, կասկածելի են, քանի որ նոյն գիրքին ուրիշ օրինակներն առ հասարակ Տովբիթ, Յուզիթ, Մակաբայեցիք եւ միւսնկանոնները կանոնական գրոց ցուցակէն դուրս կը յիշեն :

Սա ալ պէտք է դիտնալ որ, մեր հին եկեղեցական գրոց մէջ անկանոնները երբեք որդեկան ըսուած չեն, այլ «արքայ» «արքայի» կ'ըսուին : Եթէ երկրորդականն են, ապա անկանոն չեն . բայց այս բառը Պապական եկեղեցին հնարած է, Հայոց եկեղեցին զայն չի ճանչնար :

Ս. Դ.

Բաղէշ, 19 հոկտ. 1875

ՀՈՒՄԷՆԱԿԱՆՍ ՄԷԿ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Վենետիկի Ս. Ղազարու միաբանութիւնը, որ 170 տարիէ ի վեր հաստատուած է իբր Հայկական ճեմարան եւ գրադիտաց խումբ, Հայ ազգին մեծ ծառայութիւն ըրած է եւ դեռ կ'ընէ : Լուսաւորեալ ազգաց մեծ մասին լեզուներուն քերականութիւնը եւ բառարանը Հայոց համար յօրինեցին այս միաբանք : Ազգին ուղղակի կամ անուղղակի օգտակար դիտութեանց եւ սեմանց մեզ անգէտ թողած չեն : Արդարեւ, եթէ ազգն այս բազմախիտ միաբանից ջանքերէն զուրկ մնացած ըլլար, Հայկական գրականութիւնն այսօր շատ ողորմելի կ'ըլլար : Այս տաղանդաւոր եւ աշխատաւոր մարդոց կրօնական գաղափարներն ինչ որ են, եւ սրջափ տարբեր մեթոդներէն, իրաւունք չէ որ այդ պատճառաւ անոնց դործերուն յարգը կոտորենք, կամ անոնց ծառայութիւնն ուրանանք : Բոլոր անոնք որ Հայ անունը կը կրեն, ջանալու են ամէն առթիւ մէջ իրենց երախտագիտութիւնը դէպի նոսա յայտնել, անանց վրայ ազէ կ'սօսիլ, եւ դովութեամբ ու պարծանօք ցուցնել անոնց գործերն օտարականաց :

1845ին Վենետիկոյ Մխիթարեանք սկսան «Բաղնիկ» անուն պատկերազարդ ամսաթերթը հրատարակել, որ միջոց եղաւ լուսաւորութեան այն ժամանակուան Հայոց որ դեռ մեծաւ մասամբ մտաւորական քնոյ մէջ էին, եւ «պոպոյն սէն», «պոպոյն փաստ» բառերը չէին հասկնար, լած անգամ չէին : Յիշեալ թերթը դեռ կը շարունակուի եւ քիչ ծառայութիւն չըներ ազգային լեզուին եւ գրականութեան եւ մեր նախնեաց յիշատակաց անկորուստ պահուելուն : Հիմա Բազմավիտին երեք ամսականը մէկտեղ կապուած կը հրատարակուի, այսինքն, տարին չորս անգամ, եւ բաւական մեծ գիրք մը կը կազմէ միւսնոյն գնով, որ է տարեկան 10 ֆրանք : Երեք ամսականը միայն ընդունողք 3 ֆրանք պիտի վճարեն :

Բազմավիտին այս տարուան առաջին եւսմանայ տետրին մէջ խմբագրական լուրջ յօդուած մը կայ, որ, թէեւ Հռովմէական Հայոց պառակտեալ մասերուն յորդոր է, բայց որովհետեւ ընդհանուր վերաբերութիւն մը ունի, Աւետարեբի ալ հոգւոյն համաձայն է, որ է խաղաղութեան եւ սիրոյ նպատակ, անկէ հետեւեալ փոքր մասն աշխարհաբար թարգմանելով Աւետարեբի ընթերցողաց ուղեցի հաղորդել :

«Եթէ ամէն ազգ շարժման մէջ է, Հայ ազգն է՞նչ կ'ընէ : Հայ ազգն ալ ուղիղ ճամբով կը ջանայ յառաջադիմութեան նպատակին հասնել : Կը վկայենք թէ Հայք շարժման մէջ են, բայց դիտնալու է որ յառաջադիմութիւնն, ընկերական ստոյգ բարիք մը ըլլալու համար, պարտի ստոյգ բարոյականի վրայ հիմնուած ըլլալ : Այսպէս միայն հոգին սնունդ կ'ընդունի, միտքը կը զօրանայ եւ բարին չարէն, արդարն անիրաւէն կ'որոշէ : Եթէ իրօք կ'ուզենք ծաղկեցնել եւ երջանկայնել մեր հայրենիքը, ուղիղ ճամբով, սիրով եւ խաղաղութեան հոգով դէպ ի բարին, դէպ ի դիտութիւն, դիմենք, եւ հինցած բաժանումները եւ տարաձայնութիւնները մէկդի թողլով իրարու փոփոխակի ձեռք տանք : Մինչդեռ միտքերը խռովուած են եւ ամէն բան ալեկոծութեան մէջ է, ճշմարիտ յառաջադիմութիւն հնար չէ, վասն զի ներքին ալեկոծութիւնն արտաքնոյն վրայ, այսինքն՝ դպրութեան, գիտութեան, վաճառականութեան եւ արհեստներու բարգաւաճութեան վրայ, ազդեցութիւն կ'ընէ : Ուստի այս վախճանի անդորրութիւնը որչափ կ'ուշանայ, մեր ստոյգ յառաջադիմութիւնն այնչափ ետ կը մնայ : Յորչափ որ իբրեւ համասեռք եւ համալեզուք զիրար չենք սիրեր, մեր քաղաքակրթութիւնը դժուարին պիտի ըլլայ : Բայց քաղաքակրթութիւն ըսելով գիտու-

թիւններէ, արհեստներէ եւ վաճառականութեանէ յառաջ եկած դիւրութիւններ միայն չենք 'հասկնար, այլ ճշմարիտ քաղաքակրթութիւնն որ մեր մտաւոր եւ բարոյական կատարելութիւնն է, որով միայն կրնանք ճանչնալ եւ վճարել մեր պարտքը մեր Ստեղծողին, մեր անձին, մեր ծնողաց, մեր հայրենեաց, մեր բարեկամաց եւ բոլոր մեր նմաններուն : Քաղաքակրթութիւնը ոչ ալ մեծամեծ աշխարհակալութիւններու եւ մեծ հարստութեան մէջ կը կայանայ : Հին Հռովմ ժամանակ մը շատ հարուստ եւ գրեթէ բոլոր աշխարհի տէր էր, բայց խոտորած էր իր նախնեաց առաքինութեան շուղէն : Մեր խօսքին զօրաւոր օրինակ մը կրնայ ըլլալ «Նոր Հռովմ», Գաղղիոյ մայրաքաղաքը, Բարիզ, որ, թէպէտ ամէն արտաքին սերտութիւն ունի, բարոյական հիման վրայ հաստատուած չըլլալուն համար կործանման վտանգին մէջ ինկաւ :

Ուստի թող մեր յառաջադիմութեան գլխաւոր կէտը բարոյականն ըլլայ, եւ անատեն այնպէս կը սիրենք մեր հայրենիքը եւ մեր նմանները, որ մեր անձին շահերն անգամ կը զոհենք անանց օգտին համար : Զրոց բնութիւնը մեզի օրինակ ըլլայ . ասոնք թէպէտ տարբեր ազգիւրներէ կը բղխեն եւ հակառակ կողմերէ կու գան, սակայն ամէնքն ալ, երբ իրարու կը պատահին, այնուհետեւ կը մտնան իրենց ազգիւրները, կը միանան, մէկ մարմին կ'ըլլան եւ մէկ ընթացք կ'ունենան : Բոլոր համազգի էակներ իրարու պէտք ունին, ինչպէս որ մարդ մը կամ բան մը ինք իրմէ չի կրնար ըլլալ, այնպէս ալ ինք իրեն համար չի կրնար ապրիլ : Եթէ ազգի դիտենք, կը տեսնենք որ տիեզերք անընդհատ եւ ընդհանուր սեղան է զոհի, որուն վրայ շարունակ փոփոխակի էակներու անձնազոհ նուիրումներ կ'ըլլան միմեանց փոխարէն : Բնութեան հիմնալի կարգն է որ բոլոր արարածք զիրար սիրելով եւ իրարու օգնելով, ներքին եւ ընդհանուր ներդաշնակութիւն մը կազմեն :

Ազգայնոց ուշադրութիւնը կը հրաւիրեմք Հայ Հռովմէականաց կողմանէ Բարիզու բարոյականութեան նկատմամբ արուած այս վկայութեան վրայ : Հայ Հռովմէականաց, կ'ըսեմ, որ իրենց աչքերը Բարիզ անկամ անոր կը նայէին ամէն բանի մէջ, եւ ինչ որ Բարիզէն էր կամ Գաղղիական էր՝ անխտիր կ'ընդունէին, եւ Բարիզացւոց կեանքն, իբրեւ ընտրելագոյն, իրենց կենացը կաղապար բռնած էին : Ո՞վ կրնայ հաշուել Հայկական ընկերութեան եւ ընտանեաց այս սրտճառաւ տեսած եւ կրած միասնեքը, ինչ որ Բողոքականք կ'ըսէին՝ անլուելի էր . ահա նոյն իսկ Կաթողիկոս վկայութիւնը, կը յուսանք թէ այս ձայնը կը լսուի, եւ այն բարոյական ախտէն բանուածները բժշկելու միջոց կ'ըլլայ :

Ա. Լ. ԲՍՍՆ ԱՍՏՈՒԹԻՒՆ

ՕՐԻՆԱԿ ԸԼԼԱԼՈՒ ԱՐԺԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ

Աւետարանի ընթացողք թերևս կը յիշեն Սանտուիչեան կղզիները ծնած տարրոր կիւլիք, որ տարի մը առաջ Թուրքիոյ շատ տեղերուն այցելութիւն ըրաւ: Անոնք որ մոռցած չեն անոր բանիբունն և ազգու քարոզները Խաղաղական ովկիանոսի կղզեաց մէջ առաքելական գործին վրայ, անտարակոյս հաճութեամբ պիտի կարգան, եթէ հոս տեղեկութիւն մը տանք յիշեալ կղզեաց եկեղեցիներէն մէկուն վրայ, ուր ժամանակ մը հովուութիւն ըրաւ տարրոր կիւլիքի հայրը: Այս եկեղեցին Մուրքայ կոչուած կղզոյն մէջ է, որ Սանտուիչեան կղզեաց խումբին կը վերաբերի: Երբ Ամերիկացի միտինոսարք առաջին անգամ Թուրքիա եկան, այս կղզոյն բնակիչները մերկ և վայրենի հեթանոսներ էին: Կղզին փոքր է, անոր դիրքն ալ վաճառականութեան յարմար չէ, և բոլոր բնակիչները 3,000 էն պակաս են: Ասոնք, թէպէտ հիմա աշխատասէր են, աղքատ են տակաւին: Բայց և այնպէս անոնցմէ շատերը գործունեայ և առատաձեռն Քրիստոնեաներ են:

Նոր տեղեկագրի մը նայելով, վերոյիշեալ եկեղեցին կրօնական գործերու համար մէկ տարուան մէջ հետևեալ գումարները տուած է.

	Կիրա Օսմ.
Հովուին ամսական	105
Չանգակի մը համար	44 1/2
Ժողովարանին նորոգութեան	30
Երիցատան նորոգութեան	5
Աղքատաց համար	10
Ուրիշ տեղեր քարոզութեան գործի	131
Ժողովարանի շինութեան համար ուրիշ եկեղեցւոյ մը օգնութիւն	25 1/2
Ընդ ամէնը	348

Այս ցուցակէն կը տեսնուի որ յիշեալ եկեղեցին, մինչ իւր ծախուց և աղքատներուն համար 191 1/2 լիբա տուաւ, 136 1/2 լիբա նպաստ ըրաւ ուրիշներուն համար, թէ իր կղզոյն մէջ և թէ գուրսը: Նոյն հաշուէն կը տես-

նուի նաև որ, ուրիշ եկեղեցիներու և արտաքին քարոզութեան համար 51 1/2 լիբա աւելի տուաւ քան իր հովուին մէկ տարուան թոշակին համար: Աստուած անտարակոյս կ'օրհնէ այսպիսի եկեղեցի մը: Հոս համառօտիւ դնենք անոր պատմութիւնը, ուր երկու կէտ կայ մանաւանդ դիտողութեան արժանի:

1. Ի սկզբան այս կղզեցիներէն ոմանք սիրով ընկալան Աւետարանը և ճշմարտապէս նորէն ծնան Հոգւոյն սրբոյ զօրութեամբ: Երբ այս քիչ մարդիկ Աւետարանին հնազանդեցան, անոնց վարուց և բարուցը, անմիջապէս նաև անոնց նիւթական կենացը մէջ տեսնուած մեծ փոփոխութիւնը բոլոր կղզեցիներուն այնպիսի մեծ ազդեցութիւն ըրաւ, որ ուրիշ շատեր ալ յարեցան անոնց: Վերջապէս գրեթէ բոլոր բնակիչք եղան անուամբ Քրիստոնեայ, և միացան առաջիններուն հետ:

2. Այս ժողովուրդը սկիզբէն շնորհակալութեամբ ընկալաւ միտինոսարաց դարուստը, սորվեցաւ անոնցմէ գործել, և, առանց արտաքին օգնութեան, իր ձեռքովը դպրոցներ և ժողովարաններ շինել: Այս մարդիկն իրենց վրայ առին նաև իրենց վարժապետներուն և բնիկ հովուին ապրուստի հոգը, այս վերջիններն ալ յանձն առին ժողովուրդին պէս ապրիլ, և գոհութեամբ կ'ընդունէին ինչ որ հաւատացեալը կուտային ըստ կարողութեան: Իրենց աղքատութիւնը պատճառ չընելով դուրսէն օգնութիւն պահանջելու, աղատութեան վսեմ ոգով միաբան և համամիտ յառաջ գացին, Աստուծմէ միայն օգնութիւն սպասելով: Եւ Աստուած, ըստ իւր խոստմանց (Մաղ. Գ. 10, Ղուկ. 2. 38), բացաւ երկնից պատահանները, և թափեց անոնց վրայ այնչափ օրհնութիւններ որոնց տեղ չէր բաւեր:

Եթէ Պօղոս առաքելալ հիմա երկրիս վրայ ըլլար, պիտի չգովէր այս եկեղեցին, ինչպէս գոված է Մակեդոնացւոց եկեղեցին որ յետին աղքատութեան մէջ առատօրէն կուտար (Բ Կորնթ. Ը. 1—5), և պիտի չյորդո-

րէր Թուրքիոյ եկեղեցիներն, ինչպէս յորդորեց Կորնթոսի եկեղեցիները (Բ Կորնթ. Ը. 5—24, Թ. 1—15), Մակեդոնացւոց պէս գործքով ցուցնելու Քրիստոնէական ոգին յօրինակ աշխարհի:

Թուրքիոյ Աւետարանական եկեղեցիներէն ոմանք իրենց հոգւոր նուէրներովն արդէն բարի օրինակեղան աշխարհի:

Կը յուսանք թէ այս եկեղեցիներն իրենց օրինակը փայլուն պահելու, ուրիշ եկեղեցիք ալ միևնոյն բարի օրինակը տալու պիտի ջանան:

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ

Տեղւոյս Աւետարանական Հաւաքիչ ընկերութեան արուեստահանդէսն ամսոյս 15ին կատարել խոստացած էինք. սակայն բազում բարեկամք կարծելով թէ, արուեստահանդէսն այս տարի ալ անցեալ տարուան ժամանակը պիտի ըլլայ, դեռ նոր սկսան իրենց նուէրները պատրաստել: Ուստի մենք ալ ստիպուեցանք քիչ մ'ալ երկարաձգել, և եթէ Տէրը կամենայ, դեկտ. 19ին ուրբաթ գիշեր պիտի կատարուի արուեստահանդէսը:

Այս առթիւ նաև հրաւէր կը կարգանք մեր բարեկամաց, որ այն գիշեր հանդիսին ներկայ դանուիլ հանին, և յուսով ենք որ նոցա առատաձեռնութեամբ պիտի կարողանանք շքեղ հանդէս մը կատարել:

Ի դիմաց յանձնաժողովոյ
Պ. ՄԱՐՏԻԿԵԱՆ

Պրուսա, նոյ. 13/25, 1875

ՎՆԱՍԱԿԱՐ ԳՈՂՈՐԵՒՔ ԱՆՀԵՏ ԸՆԵԼՈՒ ՄԻՋՈՅ ՄԸ

Խորոված խահուէն շատ ազգու միջոց է անասուններէն և տունկերէն բուրսղ անհաճոյ և վնասակար գոլորչին անհետ ընելու: Նոր խորովուած խահուէէն քիչ մը դիր սենեկին մէջ ուր օդն ապականած է փառած միտէ կամ ձուկէ, կամ լուաշեաց խոնաուութենէն յառաջ եկած գոլորչիներէ, քիչ ատենուան մէջ անհաճոյ հոտը սենեկէն անհետ կ'ըլլայ:



Կ Ե Ս Ա Ր Ի Ա

Կեսարիա Կապադովկիոյ մայրաքաղաքն էր որ հին ատենը Մաթաք կը կոչուէր: Տիրերի կայսեր ժամանակ (յամի Տեառն 14—37) Հռոմայեցիք առին այս քաղաքը, և ի պատիւ կայսեր կոչեցին Կեսարիա: Այս քաղաքը ժամանակաւ աւելի ընդարձակ էր: Երրորդ դարուն կիսուն մօտ Պարսից թագաւորը Շապուհ առաւ Կեսարիա, թէպէտ բնակիչները քաջութեամբ դէմ դրին: Կըսուի թէ այն ատեն այս քաղաքն ունէր իբր 400,000 բնակիչ, որոնցմէ շատերը սղաննուեցան Պարսիկներէն:

Կեսարիա նաև եկեղեցական պատմութեան մէջ տեսարան եղաւ կարևոր դէպքերու: Մեծն Բարսեղ հօսճնաւ և թաղուեցաւ (328—379.) Գրիգոր Նիւսացի, Բարսեղի կրտսեր եղբայրը, Կեսարիոյ մօտ քաղաքի մը մէջ ապրեցաւ, և Գրիգոր Նաղիանդացի մտերիմ բարեկամ էր Բարսեղի և Նիւսացւոյն: Գրիգոր Լուսաւորիչ ալ իր տղայութեան ատենը բերուեցաւ Կեսարիա, ուր ամուսնացաւ, և յետոյ հրաժարելով իր ամուսնէն առանձնացաւ, և ի վերջոյ հօս ձեռնադրուեցաւ եպիսկոպոս Հայոց:

Կեսարիոյ քաղաքը ծովէն իբր 4,000

ոտք բարձր լեռնադաշտի մը վրայ է: Քաղաքէն քանի մը ժամ հեռու դէպ ի հարաւ, և նոյն լեռնադաշտէն 9,000 ոտք բարձր է Արգիաւ (Էրճիա) լեռը, որոյ գագաթը մշտնջենաւոր ձիւնով ծածկուած է:

Վերի պատկերը Կեսարիոյ երրորդ մասը միայն կը ցուցնէ: Քաղաքին մէջ տեղէն անյնող հին պարիսպը հաւանականապէս շինուած է Սարակիսոսներէն: Քաղաքին մէջ կան ոչ սակաւ շէնքեր կոնստանդինոսի, որոնց մէկը կը տեսնուի պատկերին վրայ քաղաքին դէպ ի մէջտեղը: Կը կարծուի թէ ասոնք ի սկզբան թուրքաց գերեզմաններ էին: Քաղաքին բոլորակը կան ընդարձակ գերեզմանոցներ: Գրեթէ բոլոր այն կողմերը բլուրներն առանց ծառատունկի են, և շատերուն գագաթին վրայ հողակոյտեր կան:

Անդրիոյ Աստուածաշունչի ընկերութեան դորձակալը, միտքըր Պէյքըրը, 1823ին այցելութիւն ընելով այս քաղաքին, Հայերէն գրով թուրքերէն Սուրբ զեքը ծախեց, որ Բեդրոպուրի տպուած էր Բուսիոյ Աստուածաշունչի ընկերութեան ծախիւք: Ամերիկացի միսիոնար մը 1827ին եկաւ բնակիլ այս քաղաքը, բայց զրեթէ ամսէ մը մեռաւ: Կոստանդնուպոլսի Հայք Աւետարանական շար-

ժումը խափանել ուզելով, 1839ին յաջողեցան Բողոքական եղող Հայ եղբայրներէն երկու հոգի Կեսարիոյ մօտ վանք մը արտօրել: Ասոնց մէկն էր պտ. Յովհաննէս Տ. Սահակեան: Երբ այս եղբայրը Կեսարիա հասաւ, տեղւոյն Հայերէն շատերը հետաքրքիր եղան դիտնալ թէ ինչ յանցանոց համար արտօրուած էր. և երբ պտ. Տ. Սահակեան անոնց իմացուց թէ Աւետարանն իբրեւ միակ կանոն հաւատոյ և բարուց ճանչնալուն համար արտօրուած էր և ոչ ուրիշ յանցանքի համար, անոնք ըսին. «Ուրեմն պատրիարքը թող մեզ ամէնքս ալ արտօրէն» իբր վեց տարի ետքը Տէր Վրդանէս ալ արտօրուեցաւ Կեսարիա: Այս անձին ձեռօք, որ ամէն տեղ կը քարոզէր Աւետարանը որուն համար արտօրի մէջ էր, Աւետարանական ճշմարտութեան պատուական և հոգեւոր սերմը ցանուեցաւ այն կողմերը: Վերջապէս 1849ին Այնթապցի Հայ քարոզիչ մը գնաց Աւետարանը քարոզել Կեսարիա, քիչ մը ետքն ալ Զմիւռնիայէն միսիոնար մը եկաւ հոն բնակելու: Միտքըր Ծարնսուտըթ և միտքըր Պօլ 1854ին իբր օգնական եկան այս աշխատութեան քով, և նոյն տարին յուլիսի Զին կազմուեցաւ Կեսարիոյ Աւետարանական եկեղեցին ութ անդամներով, որոց մին էր պտ. Քերովթէ, որ շատ տարիներէ ի վեր այն եկեղեցւոյն հովիւն է: Այս եկեղեցին հիմա իբր 130 անդամ ունի:

ԼՈՒՏՈՆԻ ԱՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Լոնտոնի ստորերկրեայ երկաթուղին մօտերս մէկ օրուան մէջ 246,547 ճամբորդ տարաւ: Այս երկաթուղին քաղաքին տակը գրեթէ բոլորակ ճամբայ է, և իբր 20 մղոն երկայն: Կայարաններն իրարմէ իբր կէս կէս մղոն հեռու են: Իւրաքանչիւր կառախումբ կը բաղկանայ 12 կառքէ: Ասոնք կայարան մը հասնելով, երկու բողբէի մէջ ճամբորդները և բեռը կը հանեն, և նոր ճամբորդ և բեռ առնելով յաջորդ կայարանը կը հասնին:

Այս երկաթուղւոյն ամէն մէկ մղոնն իբր 5,000,000 Անգլիական լիրա արժեց, բայց այս գումարին գրեթէ երեք քառորդը վճարուեցաւ անոնց որոնց առնելուն տակէն կ'անցնի երկաթուղին: Ճամբան այսչափ մեծ ծախքով եղաւ, բայց և այնպէս բաւական շահ կը բերէ շինողներուն:

Հ Ի Ն Գ Ի Բ Ի Ե Ր

Առաջին տպագրեալ գիրքը տպուեցաւ վայտի կոճղներու վրայ 1420ին և 1430ին մէջտեղ: Տպագրութեան համար մետաղեայ գիրքեր շինուեցան նախ 1450ին: Մետաղեայ գիրքերով տպուած առաջին գիրքն էր Աստուածաշունչը, Գերմանիայ Մայնց քաղաքը, իբր 1453ին Կուդգեմպերկի և Ֆալոպի ձեռքով: Նոյն քաղաքը 1457ին տպուած Սաղմոսն առաջին գիրքն է որուն մէջ թուական գրուեցաւ: 1460ին Լատիններէն և Գերմաներէն տպուած Աստուածաշունչը թերթին երկու երեսը տպուած առաջին գիրքն էր: Էջերուն վրայ թուանշան ունեցող գիրք մը տպուեցաւ նախ 1470ին: Երաժշտական նշաններ ունեցող գիրք տպուեցաւ նախ 1474ին: Լատին հեղինակներուն գործքերէն առաջին անգամ տպուեցան 1463ին Կիկերոնի սատենախօսութիւնները: Հին Յոյն հեղինակներուն գործքերէն ալ առաջին տպուած գիրքն եղաւ Միլան 1480ին Եսոպոսի առակաց գիրքը: Ամերիկայի վերաբերեալ տպուած առաջին գրութիւնը եղաւ Քրիստափոր Կոլումպոսի

մէկ նամակը Հռոմ 1493ին: Ամերիկայի մէջ առաջին անգամ գիրք 1640ին տպուեցաւ, և հոն տպուած առաջին Աստուածաշունչն էր թարգմանութիւն մը այն երկրին մէկ բնիկ վայրերնի լեզուով 1661ին: Այս լեզուն ետքը անհետ եղաւ:

ՄԱՐՍՈՒԱՆՈՒ ԱՍՏՈՒԹՄԱԲԱՆԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Նոյ. 8ին առաւօտեան ժամը 9ին երգով մը սկսաւ այս ձեմարանին քննութիւնը: Միտթըր Բիչարտսըն աղօթք մ'ըրաւ և Սուրբ գիրքէն քանի մը տուն կարգաց: Նախ, առաջին կարգի աշակերտք քննուեցան Անգլիերէն թարգմանութեան, աստուածաբանութեան, եկեղեցական պատմութեան և Եսայեայ գրոց մեկնութեան մէջ: Հոլլաբանութեան և երկրաբանութեան քննութիւնը մնաց ժամանակի սղութեան համար: Աս բոլոր դասերուն մէջ աշակերտաց տուած պատասխանները շատ գոհացուցիչ էին, ինչպէս վկայեցին արդոյ քննիչք: մասնաւորապէս աստուածաբանութեան մէջ մեծ յառաջադիմութիւն ըրած էին աշակերտք: Նոյն օրը քննուեցան նաեւ երկրորդ կարգի աշակերտք Եսայեայ գրոց և Պօղոս առաքելւն առ Եբրայեցիս դրած թղթոյն մեկնութեանը մէջ: Երկրորդ օրը քննուեցան դարձեալ երկրորդ կարգի աշակերտք տրամաբանութեան, Հայկաբանութեան, մտաւորական փիլիսոփայութեան, աստեղաբանութեան, Անգլիերէնէ ի թուրքերէն, և թուրքերէնէ յԱնգլիերէն թարգմանութեան մէջ: Քննութիւնը կ'ընդմիջէր երգերով և ձուերով: Յոյն աշակերտներէն մին Անգլիերէն լեզուաւ ճառ մը կարգաց որ հանդիսականաց բուն ծափահարութեամբ պատկուեցաւ: Այս հանդիսին ներկայ գտնուողք 200 հոգիէ աւելի էին: Քննութեանէն ետքը Ամասիոյ Յոյն դասատուն թուրքերէն լեզուաւ ատենաբանութիւն մ'ընելով ցուցուց ուսման և գիտութեան օգտակարութիւնը, և երախտագիտութեամբ յիշեց Վեհ Սուրբանէն այս մասին բոլոր հպատակաց անխափր շնորհուած արտօնութիւններն, որոնք դիւրացուցած են թուրքից մէջ ուսմանը և գիտութիւն ծաւալելու միջոցները: Թուրք հանդիսականք շատ ուշադրութեամբ մտիկըրին այս ատենաբանութիւնը: Յետոյ միտթըր Բիլիս Սուրբ գիրքէն մաս մը կարգաց և աղօթքով մը վերջ տուաւ հանդիսին:

Երեկոյն ժամն 9ին միջոցները մեծ բազմութիւն մը գումարեցաւ ի ժողովու-

րան առաջին կարգի աշակերտաց ճառերը լսելու: Այս կարգի աշակերտք իրենց ուսման քառամեայ շրջանը լրացուցած ըլլալով հիմա ձեմարանէն կը մեկնին: Այս երեկոյեան հանդէսն սկսաւ փառաբանութեան երգով և աղօթքով: Նախ, Սրբալիրցի Թորոս Յ. Քէնտիկեան Աւետարանի պաշտօնէութեան ուրիշ ամէն պաշտօնէութիւններէ գերազանցութեան վրայ ճառելով, ցուցուց թէ այն պաշտօնը նոյն իսկ աշխարհային երջանկութեան չէնքին հաստատուն նեցուկն է, և թէ Աւետարանի պաշտօնեայք Աստուծոյ գեապարաներն են: Երկրորդ, Մանուկ Սըլվաճեան թուրքերէն լեզուաւ ճառ մը կարգաց, որոյ նիւթն էր Քիւլէի Բէկալէի Երրորդ, Մուրատչայցի Սարգիս Վարդանեան ճառ մը կարգաց Քրիստոսի թագաւորութեան վրայ: Չորրորդ, Յովհաննէս Յակոբեան թուրքերէն լեզուաւ ճառ մը կարգաց, որոյ նիւթն էր Ճիւրթի Գեղեցի Գեղեցի Ուլահ: Հինգերորդ, Յակոբ Վ. Պիտիկեան խօսեցաւ Լուսաւոր վարդապետի վրայ: Վեցերորդ, Կարապետ Ղազարեան թուրքերէն ճառ մը կարգաց աստուածային արդարութեան վրայ (Պէրախալիք Ելահէի): Եօթներորդ, Ասատուր Մ. Ալթունեանց ճառ մը խօսեցաւ Հայոց ազգին լուսաւորութեան վրայ: Ճառասուրբ գովութեամբ յիշեց Միտթարեանց ջանքը Հայոց ազգին գրականութեան զարգացմանը համար: Նաեւ շնորհակալութիւն յայտնեց Ամերիկացի միսիոնարաց որոնք Հայ ազգին հոգեւոր և մտաւոր լուսաւորութեան համար կ'աշխատին: Հուսկ յետոյ, Կարապետ Յ. Դըլըճճեան թուրքերէն ճառ մը կարգաց, որոյ նիւթն էր, Վահիդ Բէկալէի Գեղեցի Գեղեցի Գեղեցի Գեղեցի: Ճառասուրբ զանազան ապացոյցներով հաստատեց թէ քարոզչի մը վարքը ժողովրդեան հոյեղին է: Վերջապէս ձեմարանին դասատու միտթըր Սիմիթ համառօտ խորտոյս մ'ուղղեց առ աշակերտս, և անոնց աշխատասիրութեան համար շնորհակալութիւն յայտնելով ուսումնասիրաւ աշակերտաց վկայականները բաշխեց: Նաեւ դախմագամ էֆէնտին յորդոր կարգաց աշակերտաց որ իրենց սորվածք և ճամբարութիւնը հաղորդեն ուրիշներուն ինչպէս իրենք առին:

Այս վերջին երեկոյնն ալ ձեմարանի աշակերտք, աղջկանց դպրոցին աշակերտուհիք, նաեւ միսիոնարք մէկտեղ ժողովեցան ձեմարանէն մեկնող աշակերտաց հրաժարական ողջոյն տալու համար: Հոն ատենախօսեց պատ. Քերովալէ Եսաօպեան, որ երկու տարի առաջ Սկովիա գացած էր, և վերադարձին քննութեան հանդիսին ներկայ կը գտնուէր: Պատ. Քերովալէ Երոպայէն նոր դարձած ըլլալով շատ գեղեցիկ բազմատուրթիւն ըրաւ Երոպայից լուսաւոր ազգաց և թուրքից ժողովրդոց վիճակին, և ցուցուց թէ մենք որչափ ետ մնացած ենք քաղաքակրթութեան մէջ. և իր ատենաբանութիւնը վերջացուց շնորհակալ ըլլալով միսիոնարներէն և ձեմարանի այլ դասատուներէն որ այսպիսի ժիր մշակներ կը հանեն Հայ ազգին սյգւոյն մէջ գործելու:

Մ. Ս. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Նոյ. 8/20, 1875

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նոյ. 25 ըստ Յուն., և Դեկ. 7 ըստ Լատ. 1875

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼՍ

Ճէվաէթ փաշա արգարութեան ատենին նախարար անուանեցաւ փոխանակ Միտհաթ փաշայի, որ անցեալ շաբաթ հրաժարական տուաւ : Վեհ. Սուլթանը Միտհաթ փաշային հրաժարականն ընդունելով անոր 10,000 դահեկան ամսական չնորհեց :

Արաաքին գործոց նախկին նախարար Սալֆէթ փաշա հասարակաց կրթութեան նախարար անուանեցաւ :

Յովհաննէս Էֆէնտիարաաքին գործոց թղթատարութեան գլուխ անուանեցաւ փոխանակ Համամեան Սարգիս Էֆէնտիի, որ հրաժարական տուաւ :

Ազրիանուպոլսոյ նախորդ կուսակալ Խուրչիտ փաշա Զմիւռնիոյ կուսակալ անուանեցաւ :

Վիտինի նախորդ կառավարիչ Խուրչիտ փաշա Էրզրոմի կառավարիչ կարգուեցաւ :

Համայն կառավարիչ Պահրամ փաշա Մուշի կառավարիչ կարգուեցաւ :

Մաքսատանց վերատեսուչ Քեանի փաշայի նախադահութեան ներքեւ յանձնաժողով մը կազմուեցաւ դաւ տարուան ելիմտից հաշուեցուցակը պատրաստելու :

— Յունաց թագաւորը Մ. Զարիֆիի Ս. Փրկչի շքանշանը չնորհեց :

Թուրքիոյ և Յունաստանի հպատակները որոշելու նպատակաւ կազմուած յանձնաժողովն այս օրերս իր պաշտօնը պիտի լննցնէ :

— Զրոյցներ կը պատէին թէ Աւստրիոյ զօրքը Պանիա պիտի գրաւեն, բայց Վիենայէն առնուած հեռագիրք այս զրոյցները կը հերքեն : Նաև սխալ է այն լուրը թէ Աւստրիա բոլորովին կտրած է այն նպատակը զոր կ'ընէր Գարատաղ ապստամբ փախստականաց : Աւստրիա, որ առաջ ամիսն 30,000 Ֆիորին կուտար, հիմա այն դումարը 5,000 Ֆիորինի իջեցուց. և ասոր ալ պատճառն է, ինչպէս կ'ըսուի, Աւստրիոյ կողմանէ տրուած նպատին բուն իր նպատակին չգործածուիլը :

Պանիոյ կուսակալ Քեուֆ փաշայէն Նոյ. 15/30 թուով առնուած հեռագրաւորոյ մը նայելով, վերոյիշեալ փաշան 17 փաշա զօրքով կաշքօն Փիլիա գնաց, և Փիլիայի մէջ հինգ ամսուան պաշար թողլով ողջամբ դարձաւ ի կաշքօ : Կայսերական զօրքը ճամբան իբր 5,000 ապստամբաց հանդիպեցան, բայց ա-

պրտամբք առանց պատերազմելու ջրուեցան :

Եէնի փաղարի զօրաբաժնին հրամանատարէն Նոյ. 18/30ին առնուած հեռագրաւորոյ մը նայելով, ապստամբաց պարագլուխներէն Միրօ անուն անձին հրամանատարութեան տակ դանուած ապստամբաց և կայսերական զօրաց մէջ տեղ, Տափօք գիւղին մօտերը, Րիգա կիրճին մէջ Նոյ. 16/28ին երեք ժամ կռիւ եղաւ : Ապստամբք իրենց ապստամարանները, 25 տուն և քանի մը մարդ կրակի տուին ու փախան : Կայսերական զօրքն երբ ետ կը դառնային, ապստամբք դարձեալ անոնց վրայ յարձակեցան և սոստիկ կռիւ եղաւ, բայց զօրքը քաջութեամբ պատերազմելով ապստամբները ջիրուցան ըրաւ :

Պանիոյ կուսակալութեան մէջ Պանալուդայէն ի Նովին բանող երկաթուղին ապստամբաց յարձակմանց ենթարկուած ըլլալով, Նոյն երկաթուղին բանեցնող ընկերութիւնը երթեկուցութիւնն առժամանակեայ կերպով դադրեցուց, և կառքերն ու այլ գործիները Պանալուդա փոխադրեց :

— Եւրօպայէն առնուած հեռագիրք կը ծանուցանեն թէ, Բուսիա կը պահանջէ որ Սուէզի ջրանցքը պատերազմի ատեն չէզոք ըլլայ, և Անգլիոյ կառավարութիւնն ալ այս պահանջման դէմ չլինար :

— Թուրքիոյ զօրաց համար Ամերիկայէն Մարթինի Հէնրի կոչուած հրացան ապստամբ ըլլալով, արդէն մեծ քանակութեամբ հրացան կ. պոլիս հասած էր : Մօտերս 5,500 հրացանի համար 17,000 Օսմանեան ոսկի յանձնուեցաւ Նոյն հրացանի գործարանին հոս դանուող գործակատարին, ուստի և հրացանները քիչ ատենէն հոս պիտի հասնին :

— Անցեալ շաբթուան մէջ երեք նշանաւոր փաշաներ մեռան, որոց մեծ պէտք ունէր Թուրքիա :

Քիւրտ Ահմէտ փաշա, Ատանայի կուսակալը մեռաւ յԱտանա :

Եղիպտոսի Խըտիւին կրտսեր եղբայրը Յազըլ Մուսթաֆա փաշա, որ սթ ամսէ ի վեր հիւանդ էր, անցեալ ուրբաթ լուսնալու դիշեր մեռաւ : Հանգուցեալ փաշան իբր 47 տարեկան էր, և եօթը արու և չորս աղջիկ զաւակ կը թողու : Մահմետական և Քրիստոնեայ բաղմամբիւ աղքատներ Յազըլ Մուսթաֆա փաշայի չնորհիւ կ'ապրէին, որոնք հիմա դառնապէս կ'ողբան իրենց բարերարին մահը :

Հանգուցեալ փաշայի թաղման հանդէսը կատարուեցաւ անցեալ ուրբաթ օր, և մարմինը ամփոփեցաւ Խալիա Էֆէնտիի շիրմին մօտերն հանգուցեալ փաշային մօրը շիրմին քով : Յուզարկաւորութեան հանդիսին ներկայ էին մեծ եպարքոսը, շէյխ իւլ Խալամ Էֆէնտիին, այլ նախարարք և բարձրաստիճան պաշտօնատարք, նաև Մահմետականաց ամէն կարգի կրօնաւորներէն մեծ բաղմամբիւն, փաշա մը կանոնաւոր զօրք, և խումբ մը սոսիկանութեան զօրք : Վերջապէս աւելի քան եօթն հազար յուզարկաւորք կ'երթային դագաղին առջևէն և ետեէն :

Զմիւռնիոյ կուսակալ, Էսատ փաշա ամսոյս 17/29ին երկուշաբթի օր մեռաւ : Էսատ փաշայի մահուան պատճառը դեռ չհրատարակուեցաւ, բայց կ'ըսուի թէ, հանգուցեալը կառավարական խորհրդոյ մէջ նստած ժամանակ, յանկարծ գլուխը կուրծքին վրայ ծռեց և հոգին աւանդեց : Այնպէս կը կարծուի որ սրտի ախտէ մեռաւ :

Էսատ փաշայի կենսագրութիւնը կը հրատարակենք Լիանդ Հերալաէն համառօտելով :

Էսատ փաշա հաղիւ 47 տարեկան էր : Նախ Փարիզի զինուորական վարժարանին աշակերտեցաւ, եւ ապա այն վարժարանին փոխ տնօրէն կարգուեցաւ : յետոյ Բրուսիա գնաց իբրեւ զինուորական ուսանող : Հանգուցեալը Յուստ փաշայի թիկնապահ եղաւ, երբ 1860 ին Քրիստոնէից կոտորածէն ետքը Յուստ փաշա մասնաւոր պաշտօնով ի Սիրիա զրկուեցաւ : Այս միջոցաւ Էսատ փաշա Սուլթանին ծանօթացաւ, եւ նորին վեհափառութեան առջև չնորհք գտաւ : Վեհ. Սուլթանը մասնաւոր պաշտօնով Էսատ փաշան Գերմանիա զրկեց, եւ Գերմանիայէն դառնալէն ետքը հանգուցեալը 1867 ին Սուլթանին ընկերացաւ նորին վեհափառութեան յերօպա ուղեւորութեան միջոցին : Անկէ քիչ մ'ետքը նախ Սուլթանին թիկնապահ, ապա սենեկապետ, եւ յետոյ Ալլանիոյ կուսակալ կարգուեցաւ : Այս վերջին պաշտօնին մէջ Էսատ փաշա մեծ յաջողակութիւն, հանձար եւ արգարասիրութիւն ցուցուց : Կրեւտի պատերազմէն ետքը զինուորական ժողովոյն նախագահ անուանեցաւ, եւ 1872 ին երբ Մահմուտ փաշա առաջին անգամ մեծ եպարքոս եղաւ, Էսատ փաշա ալ զինուորական գործոց նախարար անուանեցաւ : Սակայն քիչ մ'ետքը, այս պաշտօնէն ձգուելով Գաղատիոյ կուսակալ կարգուեցաւ : 1875 ին Գաղատիոյէն

կոչուելով մեծ եպարքոս անուանեցաւ, եւ սակայն իբր մեծ եպարքոս, մեծ գործ մը տեսնելու ժամանակ չունեցաւ վասն զի չուսով պաշտօնէն ձգուելով իկոնիոյ կուսակալ կարգուեցաւ: Հոն իր գործունէութեամբը եւ իմաստութեամբը սովէն ժողովրդեան կրած տառապանքը շատ թեթեւցուց: Իկոնիայէն Սիրիա շրջուեցաւ իբրեւ կուսակալ եւ այն տեղի զօրաց հրամանատար, ուր բոլոր ազգաց յարգանաց եւ գովեստից արժանացաւ իր համեստութեամբն, անաչառութեամբն եւ գործունէութեամբը: Քիչ մ'ետքը դարձեալ ի Կ. պոլիս կոչուելով, նախ ծովային գործոց նախարար եւ ապա երկրորդ անգամ մեծ եպարքոս անուանեցաւ: Էստտ փաշա այս անգամ իր մեծ եպարքոսութեան ժամանակ շատ բարեկարգութիւններ ըրաւ, եւ իր յօժարութեամբն իր ամառականը իջեցուց, առաջարկեց նաեւ որ տէրութեան այլ պաշտօնատարք ալ իրեն պէս ընեն. սակայն հուսկ յետոյ ներկայ կացութեան մեծ դժուարութիւնները տեսնելով հրաժարեցաւ մեծ եպարքոսութենէն եւ Զմիւռնիոյ կուսակալ անուանեցաւ:

Էստտ փաշա Թուրքիոյ ամենէն ընտիր քաղաքադէտներէն մին էր: Մաքուր բարոյականի, սլարդ ճաշակի տէր եւ անաչառ մարդ մը: Էստտ փաշա կը փախաքէր որ Թուրքիա ինքնին պատրաստէ իր վերանորոգութիւնն եւ բարգաւաճումը, ուստի այս մասին իրեն եղած ամէն օգնութիւն սիրով կ'ընդունէր: Էստտ փաշա անժառանգ մեռաւ:

— Անցեալ տասն օրուան մէջ օգը շատ խիստ էր Սև ծովուն վրայ: Նոյ. 16/28, կիրակի դիշեր, Տրապիզոն անուն Աւստրիական շոգենաւը որ Եւրոպայի ճամբորդներուն և նամակներուն կը սպասէր Կոստանդնուպոլիս բերելու՝ ստիպուեցաւ ելլել վառնալի նաւահանգիստէն որ ապահով չէ, և բացը ելլել ապահովութեան համար: Եօթը ժամ փոթորկին դէմ կը ունեւէն ետքը, ծովեզերքին ժայռերուն վրայ նետուեցաւ, և քիչ ատենուան մէջ կտոր կտոր եղաւ, բայց նաւաստիք ազատեցան:

— Կ'ըսուի թէ այժմ իբր 500 գործաւորք կ'աշխատին Պէշիքթաշի նոր մշկիթին շինութեան համար, որ Սուլթանին անուանին «Աղիզկէ» պիտի կոչուի: Մշկիթին պատերն արդէն դեռնէն քանի մ'տար բարձրացած են:

— Լրագիր հետեւեալ լուրը կը հրատարակէ.

«Մինասեան հանրածանօթ Ամերիկեան վաճառատան ընկերներէն Մի-

նասեան Սարգիս Էֆէնտի, որն որ երկար ժամանակէ ի վեր իւր բնակութիւնը Ամերիկայի (Միգղիոյ) մէջ հաստատած ըլլալով, այս անգամ մայրաքաղաքս կը գտնուի, անցեալ շաբթու մէջ Խասգիւղի Ներսիսեան ազգային երկսեռ վարժարանաց այցելութիւն մը տալով, իւր գոհունակութեան և համակրական զգացմանցն ինչան, կ'իմանանք թէ ընտիր և լաւ տեսակէն կարի մեքենայ մը նուիրել բարեհաճեր է աղջկանց վարժարանին: Այսպիսի շնորհ մը բոլոր ուսանողաց և ազգասիրաց շնորհակալութեան արժանի կը հանդիսացնէ մեծապատիւ նուիրատուն:»

— Քիչ օր առաջ, մինչ Գատը դիւղի վերջին շոգենաւը կամուրջէն դուրս յիշեալ գիւղին նաւամատոյցին կը մօտենար, ճամբորդներուն մէջ 23 տարեկան Հայ երիտասարդ մը որ, նաւը մօտենալուն պէս դուրս ցատկելու համար, նաւին դուրսի եզրը կը կենար, հաւասարակշռութիւնը կորսնցնելով ծովն ինկաւ, և իսկոյն ընկղմելով այլ ևս չերեցաւ ջուրին երեսը: Մարմինը հանուեցաւ հետեւեալ առտուն, և 100 լիրա գանուեցաւ վրան: Կ'ըսուի թէ մեռնողը Կոստանդնուպոլիս Կիւմիւշեան անուն վաճառականի մը գրագիրն էր: Ընդհանրապէս ճամբորդները շոգենաւէն ելլելու այնպէս կը փութան և այնպէս կը մրցին իրարու հետ առաջ դուրս ելլելու, որ արդարեւ զարմանք է թէ այսպիսի արկածներ ստէպ չեն պատահիր:

— Տարսոն բնակող Անգղիացիէ մը գրուած նամակ մը, որ Լ. Ե. Գ. Հէրալտի մէջ հրատարակուած է, կը նկարագրէ այն դաւառին ժողովրդեան նեղութիւնը տուրքերուն բռնի հաւաքմանը պատճառաւ: Ժողովուրդին դանդաղը ոչ թէ կառավարութեան կողմէն արուած օրէնքին դէմ է, այլ այն եղանակին դէմ որով կառավարութեան պաշտօնատարք, տասանորդ հաւաքողք և այլք, կը գործադրեն օրէնքը: Պաշտօնատարք հարկերուն համար սրչափ ստակ որ կ'ուզեն՝ կը պահանջեն, և չկայ մէկը որ ժողովուրդը պաշտպանէ անիրաւ պահանջմանց դէմ: Եթէ մէկը զլանայ վճարել, մի միայն պատասխանն այս է, «Իրուեցաւ, ուստի վճարէ, ապա թէ ոչ բանար կ'երթաս»: Բանտերն ալ այնպէս ահարկու են որ մարդիկ կ'ընտրեն մանաւանդ անիրաւութեան համբերել քան թէ վտանգի զնեւ իրենց կեանքը, և այսպէս կը վճարեն

պահանջուած դուրսը, թէպէտ վճարելու համար կը ստիպուին ծախել ինչ որ ունին, կամ հարիւրին 50 տոկոսեալ փոխ առնուլ վաշխառուներէ:

— Քանի մը տարուան մէջ քանի մը մանր Գերմանացի դաղթականութիւններ հաստատուեցան Պաղեստինի մէջ: Այն դաղթականք, որ Երուսաղէմի մէջ հաստատուած են, մօտերս քանի մը կարեւոր շինութիւններ սկսան, որոնց մէկն է բորտանբու հիւանդանոց մը որ «Յիսուսի հիւանդանոց» կը կոչուի:

Ե Ի Ր Ո Պ Ա

Գաղիոյ ազգային ժողովը 87 քուէի դէմ 532 քուէով վերջնական կերպով ընդունեց կառավարութեան կողմանէ առաջարկուած ընտրական օրէնքը: Այժմ կ'առաջարկուի ներկայ ազգային ժողովը շուտով լուծելով, փետրուարի մէջ նոր ժողով ընտրել:

— Խօզանտի մէջ Նամանղանի բնակիչները Բուսիոյ զօրաց դէմ ապրտամբեցան, բայց քանի մ'օրուան մէջ նուաճուեցան և շատ մարդ կորուսին:

— Մալաքքայի ծովեզերեայ քաղաքն, ուր մօտերս սպանուեցաւ Անգղիացոց գործակալը, Անգղիացի զօրքէն գրաւուեցաւ:

— Ամերիկայի ճամբորդը միտքը Սթէնլի որ գտաւ զԼիվինկոթըն Ափրիկէի խորերը, Մյա անուն Ափրիկէցի թագաւոր մը համոզած է որ Քրիստոնեայ միսիոնար հրաւիրէ իր հպատակները կրթելու համար, և Անգղիոյ մէջ անձ մը խոստացաւ Անգղիացի միսիոնարական ընկերութեան մը 12,000 սակի տալ վերայիշեալ իշխանին երկիրը միսիոնար զրկելու: Կ'ըսուի թէ ընկերութիւնն յիշեալ անձին առաջարկութիւնն ընդունած է:

Թուրքիոյ արտաքին գործոց պաշտօնեայն օտար տէրութեանց քով գանուող դեսպանաց ծանուցագիր մը զրկած է, իմացնելով, որ մօտերս խել մը վարչական բարեկարգութիւնք պիտի հրատարակուին, որոնք պիտի ցուցնեն թէ Թուրքիա ինչպէս կը բաղձայ յառաջադիմութեան շարունակ մէջ մտնել:

Նաև կ'ըսուի որ, Բ. գուռը ապրտամբեալ դաւառաց համար նոր բարեկարգութիւնք հրատարակելու վերայ է:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն նմադիր ձ. Ք. Կրիս

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵՅՆ
Ձագմագմըլար, Յակոբեան խան, Թիւ 12.